ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/98

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Բողոքաբեր՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Մ. Սարգսյանի, Ա. Բադալյանի

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ղազարյանի, Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցում, վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 27.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ վերացնել «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ.-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը և պարտավորեցնել ընդունելու հայտը բավարար գնահատելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.11.2019թ.-ին:

27.11.2019թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 27.11.2019թ.-ին, իսկ 28.11.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ:

02.12.2019թ.-ին և 09.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 09.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. <u>«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն 27.11.2019թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 30.10.2019 թվականին հայտարարել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև Ընթացակարգ), իր կարիքների համար՝ վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով: Հիմք՝ Պատվիրատուի գնանշման հարցման մասին 30.10.2019 թվականի հայտարարությունը:

Ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը սահմանվել են կնքվելիք պայմանագրի նախագծի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ով: Հիմք՝ Գնանշման հարցման 4-րդ հավելված:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 06.11.2019 թվականին ժամը 10:00 էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, որին

մասնակցության հայտ է ներկայացվել «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Արդյունքում Ընկերությունը հայտարարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հիմք՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.11.2019 թվականի N 2 արձանագրությունը:

Ընկերությունը, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ամբողջության համապատասխանում է Ընթացակարգի հրավերով տրված ապրանքի տեխնիկական բնութագրերին): Հիմք Ընկերության կողմից 07.11.2019 թվականին ներկայացրած դիմումը:

Ընթացակարգի 11.11.2019 թվականի գնահատող հանձնաժողովի նիստում նշվել է, որ Ընկերության որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմանվորող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ: Հիմք՝ Պատվիրատուի գնում կատարելու ընթացակարգի 11.11.2019 թվականի N 3 արձանագրությունը: Նշված անհամապատասխանությունների վերաբերյալ Ընկերությունը ներկայացրել է բացատրություններ և հիմնավորումներ: Հիմք Ընկերության 13.11.2019 թվականի գրությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2019 թվականի նիստում ընդունվել է իգիտություն, որ բացի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրից, Ընկերությունը ներկայացրել է որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմանավորող փաստաթղթերի շտկված տարբերակները (ըստ էության Պատվիրատուն հիմք է ընդունել Ընկերության 13.11.2019 թվականի գրությունը, քանզի Ընկերության կողմից այլ փաստաթղթեր չեն ներկայացվել): Արդյունքում Պատվիրատուն որոշել է մերժել Ընկերության հայտը ենթադրաբար հիմք ընդունելով այն, որ Ընկերությունը չի շտկել ապրանքի ամբողջական նկարագիրը: Հիմք՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019 թվականի N 4 արձանագրությունը:

ՀՀ գնումների մասին օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 16-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկան՝ գնվող ապրանքն է, աշխատանքը կամ ծառայությունը, իսկ նույն հոդվածի նույն մասի 17-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. (…):

Վերոհիշյալ իրավական նորմերի մեկնաբանության արդյունքում պետք է փաստել, որ Օրենսդիրը գնման առարկա և դրա բնութագիր տերմիններ օգտագործելուց հստակ սահմանելով դրանք նշել է, որ գնման առարկա հանդիսացող ապրանքի նկարագիրը դա գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, ձեռք բերվող ապրանքի որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունն է: Իսկ գնման առարկայի նկարագրության այլ պահանջներն ու չհիմնավորված դիրքորոշումներ, որոնք

կհանգեցնեն գնման գործընթացում մրցակցության չհիմնավորված խոչընդոտների արգելվում է:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ Ընկերությունը որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից 07.11.2019 թվականին ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որում սահմանված տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է Գնանշման հարցմամբ տրված ապրանքի տեխնիկական բնութագրին: Իսկ ինչ վերաբերվում է Պատվիրատուի 15.11.2019 թվականի N 4 արձանագրությամբ նշված այն դիրքորոշմանը, որ ապրանքի ամբողջական նակարագիրը հստակ սահմանված չէ, մասնավորապես «պետք է» բառը չի սահմանում, որ առաջարկվող ապրանքը հստակ ունի նման բնութագիր և հնարավորություն, իրավաչափ չէ: Առաջարկվող ապրանքի հստակ բնութագիրը և հնարավորությունը սահմանվում են ապրանքի տեխնիկական բնութագրով, որը ինչպես վերը հիշատակվեց պետք է պարունակի գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, ձեռք բերվող ապրանքի որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրություն: Իսկ ինչ վերաբերվում է «պետք է» բառին, ապա այն, ոչ թե՞ սահմանում է ապրանքի ամբողջական նկարագիրը, այլ մատնանշում, որ ապրանքի ամբողջական նկարագիրը պետք է լինի հենց այդպիսին, որպիսին նկարագրված է կնքվելիք պայմանագրի տեխնիկական բնութագրի բաժնում: Ուստի «պետք է» բառը դիտարկելով, որպես ապրանքի ամբողջական նկարագրի պահանջ, առնվազն անհասկանալի է և ոչ իրավաչափ:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը,

երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (…):

Սույն կետերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, եթե առկա է հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայությունը՝ արձանագրված է անհամապատասխանություն, հանձնաժողովի կողմից կասեցված է նիստը կասեցված է մեկ աշխատանքային օրով և հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ապահովել է ծանուցումը մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը և եթե անհամապատասխանությունը մասնակցի կողմից չի շտկվել:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ նշված անհամապատասխանությունը ապրանքի ամբողջական նկարագրության մասով հիմնավորված չէ, իսկ ինչպես արդեն վերը նշվեց «պետք է» բառը արտացոլում է ոչ թե ապրանքի ամբողջական նկարագրի բովանդակությունը, այլ որ ձեռք բերվող ապրանքները պետք է համապատասխանեն կնքվելիք պայմանագրում նշված ապրանքի ամբողջական նկարագրագրին, ուստի այդ հիմքով արձանագրել անհամապատասխանություն ոչ իրավաչափ է: Երկրորդ եթե ենթադրենք, որ Պատվիրատուի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, ապա Կարգով սահմանված պահանջների պահպանմամբ հանձնաժողովը մեկ օրով չի կասեցրել նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով չի ապահովել ծանուցումը մասնակցիս՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, քանզի այդ պարագայում նշված կլիներ ենթադրյալ անհամապատասխանության մասին, թե կոնկրետ ապրանքի ամբողջական նկարագրում, ապրանքի որ բնութագիրը չի համապատասխանում հրավերում նշված ապրանքի տեխնիկական բնութագրին: Ավելին Պատվիրատուն հենց ինքն է գնում կատարելու ընթացակարգի 11.11.2019 թվականի N 3 արձանագրության մեջ մատնանշել, որ նույնական են հրավերով նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը և Ընկերության կողմից 07.11.2019 թվականին ներկայացրած նկարագիրը, ուստի անհամապատասխա-նությունը անհասկանալի էր, իսկ «պետք է» բառի մասին այդ արձանագրության մեջ նշում

չկար, ուստի Պատվիրատուի՝ անհամապատասխանության վերաբերյալ ոչ իրավաչափ և ոչ հստակ մեկնաբանությունը և դրա վերաբերյալ Կարգով սահմանված ընթացակարգային խախտումները ստեղծեցին անհարկի ոչ իրավաչափ խոչընդոտներ: Ավելին պետք է փաստել, որ թեկուզև Կարգի խախտմամբ՝ գնում կատարելու ընթացակարգի 11.11.2019 թվականի N 3 արձանագրության մեջ մատնանշելով Ընկերության կողմից անհամապատասխանությունը շտկելու համար երեք աշխատանքային օրվա տրամադրումը և այն ստանալուց հետո 3-րդ աշխատանքային օրը նիստ հրավիրելու հանգամանքը ինքնին ենթադրում էր, որ պարզ թվաբանական հաշվարկի արդյունքում, այդ նիստ պետք է տեղի ունենար 18.11.2019 թվականին, այլ ոչ թե 15.11.2019 թվականին: Ավելին եթե Պատվիրատուն որպես շտկում հիմք է ընդունել Ընկերության 13.11.2019 թվականի, ապա այդ նիստ պետք է տեղի ունենար կրկին 18.11.2019 թվականին: Վկայակոչված ընթացակարգային խախտումները հիմնավորում են Պատվիրատուի ոչ իրավաչափ վարքագիծը և անհարկի խոչընդոտների ստեղծումը:

Ինչ վերաբերվում է որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը ներկայացնելուն, փաստենք որ դա արտահայտվել է Ընկերության կողմից 13.11.2019 թվականին ներկայացրած գրությունով, որը չի պարունակել կից փաստաթղթեր, պարզապես կրել է բացատրություն պարունակող դրույթներ և այն Պատվիրատուի կողմից դիտարկվելով, որպես շտկմանը ուղղված գործողություններ, Պատվիրատուն պետք է փաստեր նաև, որ նույն գրությամբ նշված է այն հանգամանքը, որ հավելված 3.1-ում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը նույնությամբ համապատասխանում է Պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին և որ Ընկերությունը չի կարող շեղվել Պատվիրատուի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրից, ուստի եթե նույնիսկ ընդունենք որ առկա էր անհամապատասխանություն, ապա այդ հիմքով նույնպես շտկումը կատարված էր: Առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհամապատասխանություն առկա չէր ապրանքի ամբողջական նկարագրում այլ կնքման ենթակա պայմանագրի հավելվածի ձևական պահանջներում, որի մասին Կարգով նախատեսված ընթացակարգին համապատասխան Ընկերությունը ծանուցված չի եղել: Կարելի է նաև արձանագրել, որ Պատվիրատուն 11.11.2019 թվականին հրավիրված նիստը չկասեցնելով և Ընկերության կողմից 13.11.2019 թվականին ներկայացված բացատրություններից հիմք ընդունելուց հետո պետք է հայտներ վերջնական դիրքորոշում անհամապատասխանությունների առկայության կամ բացակայության վերաբերյալ և նոր միայն մեկ օրով կասեցնելով նիստը, առաջարկեր Ընկերությանը շտկել

անհամապատասխանությունները առկայության դեպքում և էլեկտրոնային եղանակով ծանուցեր անհամապատասխանության մասին:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ վերացնել «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ.-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը և պարտավորեցնել ընդունելու հայտը բավարար գնահատելու մասին որոշում:

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, ի լրումն ներկայացված բողոքի, 09.12.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«27.11.2019 թվականին ներկայացրել ենք ՀՀ ՊԵԿ կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ բողոք, որի վերաբերյալ ներկայացվել է դիրքորոշում ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարի 02.12.2019 թվականի գրությամբ:

Պատվիրատուի դիրքորոշումը ըստ էության կրում է գնման ընթացակարգի նկարագրությանը վերաբերվող տեղեկատվություն, որի վերաբերյալ դիրքորոշում արդեն իսկ ներկայացրել ենք բողոքում:

Պատվիրատուի կողմից որպես իր գործողությունների հիմնավորում կցվել է մասնակցին ուղարկված ծանուցման արտատպված լուսանկարը, որից և ակնհայտ է, որ ենթադրյալ շտկում կատարելու ծանուցման բովանդակության մեջ առկա չէ արձանագրված անհամապատասխանության և նշված է միայն, որ կցվել է արձանագրությունը, իսկ արձանագրության մեջ նշված է ընդհանրական, որտեղ նույնպես առկա չէ անհամապատասխանության մասին նշում, այլ միայն պարունակում է նշում այն մասին, որ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը հստակ սահմանված չէ: Գնահատման է արժանի այն փաստը, որ նույն արձանագրությամբ Պատվիրատուն փաստել է ապրանքի բնութագրումը հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրի հետ նույնական լինելու վերաբերյալ և նշված պարագայում այն ոչ հստակ լինելու վերաբերյալ դիրքորոշումը անհասկանալի է:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը,

երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (…):

Նշված իրավական նորմը չպետք է մեկնաբանել ինքնանպատակ և անհամապատասխանության շտկման մասին ծանուցումը դիտարկել միայն արձանագրության կցելը, արձանագրությունը ինքնին փաստում է ենթադրյալ անհամապատասխանության առկայությունը, այլ ոչ թե շտկման վերաբերյալ ծանուցում: Բացի այդ 15.11.2019 թվականի թիվ 4 արձանագրությամբ հանձնաժողովը արդեն իսկ արձանագրելով անհամապատասխա-նությունը հստակ նշել է, որ այն իր կողմից դիտարկվում է «պետք է» բառի առկայությամբ և ոչ թե ապրանքի բնութագրումը հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրի հետ նույնական լինելու հանգամանքով: «պետք է» բառի առկայությունը որպես անհամապատասխանություն 11.11.2019 թվականի թիվ 3 արձանագրությամբ արձանագրված չէ, ուստի և այդ բառի շտկման վերաբերյալ առաջարկ չէր ներկայացվել, և բնականաբար այդ բառը որպես անհամապատասխանություն արձանագրելով միայն 15.11.2019 թվականի թիվ 4արձանագրությունում գնման ընթացակարգը հայտարարելով չկայացած՝ Պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

Նշված իրավական նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ հայտի մերժման հիմք հանդիսանում է մասնակցի կողմից ներկայացվող հիմնավորումների բացակայությունը, որի

հակառակ պարագայում բացառելով մերժման հիմքերը, ավելինի վերոգրյալից բացի պետք է փաստել, որ ներկայացված է եղել հիմնավորումներ, որը Պատվիրատուն հիմք է ընդունել, սակայն արդեն իսկ 15.11.2019 թվականի նիստում արձանագրել նոր անհամապատասխանություն:

Պայմանավորված վերոգրյալով և բողոքում նշված փաստական և իրավական հիմնավորումներով, խնդրում եմ բավարարել բողոքը:»:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.11.2019թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ հնարավորություն տալով «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից 27.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 03.12.2019թ.-ի թիվ Մ-54030-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն և հայտարարվել է 1-ին տեղ զբաղեցրած Մասնակից:

Գնահատման նիստում Մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում հայտնաբերվել էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, մասնավորապես, հասկանալի չէ, թե մասնակցի կողմից ներկայացվող ապրանքը ինչ բնութագիր ունի, բացի այդ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնությամբ ներկայացնելը չի ենթադրում առաջարկվող ապրանքի բնութագրում:

Ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելիս, մասնակիցը պարտավոր է հստակ նշել, թե ինչ տեխնիկական բնութագրով ապրանք է ներկայացնում, և քանի որ Մասնակցի կողմից նախկինում կատարված պայմանագրերում առկա չէր նմանօրինակ ապրանքի մատակարարման պայմանագիր, գնահատող հանձնաժողովը հստակ չի պատկերացրել, թե մասակիցը ինչ ապրանք է ներկայացնելու և իր իրավասության շրջանակներում տվել է փաստաթղթերի շտկման հնարավորություն:

ՊԵԿ-ԳՀԱՊՅԲ-19/068 ծածկագրով ընթացակարգի հրավերի 2.5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն նմանատիպ պայմանագիր է համարվում վերահսկման և ղեկավարման սարքերի մատակարարված լինելը, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 2018 թ.-ի հոկտեմբերի 19-ին կնքված թիվ ՀՀ ԿԱ ՈՀ ԳՀԱՊՁԲ-18/12/ԱԲ/10/ԿԾ/133 տեսահսկողության համակարգի ձեռքբերման պայմանագիր որը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր, մյուս կողմից ծառայությունները սահմանված ժամկետում մատուցված չեն եղել՝ պայմանագրի կատարման ժամկետը սահմանված է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո ոչ ուշ քան 20 օրացույցային օրից մինչև 20.11.2018թ., սակայն պայմանագրի արդյունքը հանձնվել է 03.12.2018թ.-ին:

Անհամապատասխանությունների շտկման համար տրամադրված ժամկետում (Ծանուցումը իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով 7 կցվում է) Մասնակիցը շտկել է ներկայացված փաստաթղթերը՝ բացառությամբ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 3.1), որը արտացոլված է գնահատող հանձնաժողովի սույն թվականի նոյեմբերի 15-ի թիվ 4 արձանագրության մեջ, որով ասվում է, որ Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, մասնավորապես, «պետք է» բառը չի սահմանում, որ առաջարկվող ապրանքը հստակ ունի նման բնութագիր և հնարավորություն:

Վերոգրյալով պայմանավորված՝ հայտնում եմ Ձեզ, որ Մասնակիցը խախտել է իր իսկ կողմից ներկայացված մասնակցության իրավունքի չափանիշներին համապատասխանության մասին հայտարարությունը՝ չներկայացնելով առաջարկվող ապրանքի հստակ բնութագիր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/98 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չաւիաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չաթփբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին երեք աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացրել է Ընթացակարգի հրավերով պահանջված ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագրերը.

«Սարքավորումը պետք է ունենա ծրագրային ապահովում, որը կկառավարի մաքսատան տարածք մուտք գործող քաղաքացիների հոսքը, կկառավարի ուղեփակոցի աշխատանքը, փոխկապակցված կլինի՝

- *Մաքսային տարածքում մաքսային ձևակերպման հերթերի կառավարման համակարգի հետ*
- *Մաքսային մարմնի ավտոմատացված տեղեկատվական համակարգի հետ (տարանցման հայտարարագրի):*

Համակարգիչ Պրոցեսոր - Intel® Celeron®: Dual-Core J1800 SoC onboard Processors, Օպերատիվ հիշողություն - DDR3L 2GB LAN - 1 X Gigabit LAN Controller Մշտական հիշողություն - 120Gb QR / barcode reader Newland, Image Sensor 800x800 CMOS Illumination, White LED, Minimal Print Contrast 25%, Scan Angle Roll 360°, Scan Angle Pitch ±40°, Scan Angle

Skew ±40°, Field of View Horizontal 74°, Field of View Vertical 74°, Scan Modes Sense Mode, Continuous Mode Scan Window 50mm x 50mm, 1D EAN-8, EAN-13, UPC-A, UPC-E, ISSN, ISBN, Codabar, Standard 2 of 5, Code 128, Code93, ITF-6, ITF-14, GS1 Databar, MSI-Plessey, Code 39, Interleaved 2 of 5, Industrial 2 of 5, Matrix 2 of 5, Code 11, Plessey, etc., 2D PDF417, Data Matrix, QR Code, Micro QR Code, Aztec, etc., Operating Temperature -20°C to 60°C Humidity 5% to 95% (non-condensing), Electro Static Discharge (ESD) ±15 kV (air discharge), ±8 kV (direct discharge), Sealing IP65, Ունի հովացուցիչ, ֆիլտրեր, տաքացուցիչ, թերմոստատ:

Կաղապարը՝ մետաղական:

Ծրագրային ապահովումը պետք է ապահովի՝

- *Քաղաքացիների առցանց գրանցման հնարավորություն*
- *Առցանց գրանցումների կենտրոնացված ղեկավարման հնարավորություն:*

Առցանց գրանցման միջոցով քաղաքացիներին պետք է ընձեռվի մաքսատան տարածք մուտք գործելու համար էլեկտրոնային անդորրագիր ստանալու հնարավորություն՝ յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար: Առանց տվյալ անդորրագրի քաղաքացին չպետք է կարողանա մուտք գործել մաքսատան տարածք:

Յուրաքանչյուր մուտքի էլեկտրոնային անդորրագրի ստեղծման համար համակարգը պետք է ունենա ֆունկցիոնալություն՝ մուտքագրելու հետևյալ անհրաժեշտ տեղեկատվությունը

- *Իդենտիֆիկացիոն պարամետր*
- *Մաքսատան տարածք մուտք գործելու նախատեսված օր և ժամ*
- *Կոնտակտային հեռախոսահամար:*

Հաջողությամբ ստեղծված անդորրագրի դեպքում համակարգը պետք է հնարավորություն ընձեռի տպել դրա թղթային օրինակը, կամ ուղարկել այն մուտքագրվող էլեկտրոնային փոստի հասցեով: Անդորրագրի կորցնելու դեպքում համակարգը պետք է այն վերականգնելու հնարավորություն ընձեռի: Ընդ որում, համակարգը պետք է ունենա որոշակի կանխարգելիչ քայլերի հնարավորություն, որպեսզի բացառվեն կեղծարարության դեպքերը:

Անհրաժեշտության դեպքում համակարգը պետք է նաև հնարավորություն ունենա փոփոխել անդորրագրի տվյալները: Ընդ որում, համակարգը պետք է ունենա որոշակի կանխարգելիչ քայլերի հնարավորություն, որպեսզի բացառվեն կեղծարարության դեպքերը: Առցանց գրանցումների ղեկավարման ծրագիրը պետք է հնարավորություն ընձեռի պատվիրատուի պատասխանատու աշխատակիցներին սահմանել համակարգի ընդհանուր և ընթացիկ կարգավորումներ՝ ներառյալ.

- *Աշխատանքային օրեր և ժամեր*

- *Գրանցման համար հասանելի օրեր և ժամեր*
- *Գրանցումների քանակների կառավարում:»:*

Հանձնաժողովի 11.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, մասնավորապես, Ընկերության կողմից ներկայացված 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊ ՁԲ-18/12/ԱԲ/10/ԿԾ/133» ծածկագրով պայմանագրի կատարման ժամկետը սահմանված է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո ոչ ուշ քան 20 օրացուցային օրից մինչև 20.11.2018թ., սակայն պայմանագրի արդյունքը հանձնվել է 03.12.2018թ.-ին:

«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2.5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն նմանատիպ պայմանագիր է համարվում վերահսկման և ղեկավարման սարքերի մատակարարված լինելը, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊ ՁԲ-18/12/ԱԲ/10/ԿԾ/133» տեսահսկողության համակարգի ձեռքբերման պայմանագիր, որը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:

Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, մասնավորապես, հասկանալի չէ, թե մասնակցի կողմից ներկայացվող ապրանքը ինչ բնութագիր ունի, բացի այդ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնությամբ ներկայացնելը չի ենթադրում առաջարկվող ապրանքի բնութագրում:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ի պատասխան վորոնշյալ ծանուցման, Ընկերությունը 13.11.2019թ.-ին հայտնել է, որ … Հավելված 3.1-ում ապրանքի տեխնիկական բնութագիրը նույնությամբ համապատասխանում է Պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին և «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն չի կարող շեղվել Պատվիրատուի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրերից:

Հանձնաժողովի 15.11.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն ներկայացրել է գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով

նախատեսված փաստաթղթերի շտկված տարբերակները (տեղեկությունները), բացի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրից (Հավելված 3.1):

Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, մասնավորապես, «պետք է» բառը չի սահմանում, որ առաջարկվող ապրանքը հստակ ունի նման բնութագիր և հնարավորություն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից 27.11.2019թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների

կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 17-րդ կետերի համաձայն՝ գնման առարկան գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունն է, իսկ գնման առարկայի բնութագիր՝ գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 06.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին երեք աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ ներկայացրել է Ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Հանձնաժողովի 11.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, մասնավորապես,...Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, հասկանալի չէ թե մասնակցի կողմից ներկայացվող ապրանքը ինչ բնութագիր ունի, բացի այդ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնությամբ ներկայացնելը չի ենթադրում առաջարկվող ապրանքի բնութագրում:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, որին ի պատասխան Ընկերությունը 13.11.2019թ.-ին հայտնել է, որ ... Հավելված 3.1-ում ապրանքի տեխնիկական բնութագիրը նույնությամբ համապատասխանում է Պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին և «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն չի կարող շեղվել Պատվիրատուի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրերից:

Հանձնաժողովի 15.11.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) հստակ սահմանված չէ, մասնավորապես, «պետք է» բառը չի սահմանում, որ առաջարկվող ապրանքը հստակ ունի նման բնութագիր և հնարավորություն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

հայտը մերժել և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ ձեռքբերվող «սարքավորումը պետք է ունենա..» բնութագրերը: Ընկերության կողմից թիվ 3.1 հավելվածով Հանձնաժողովին ներկայացվել է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ նշելով, որ ձեռքբերվող «սարքավորումը պետք է ունենա..» բնութագրերը: Սակայն Հանձնաժողովը նշել է, որ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնությամբ ներկայացնելը չի ենթադրում առաջարկվող ապրանքի բնութագրում, «պետք է» բառը չի սահմանում, որ առաջարկվող ապրանքը հստակ ունի նման բնութագիր և հնարավորություն:

Վերոնշյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից թիվ 3.1 հավելվածով ներկայացված ձեռքբերվող ապրանքի և հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերի միջև առկա չէ որևէ անհամապատասխանություն: Ավելին, Հանձնաժողովը արձանագրելով, որ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը հստակ սահմանված չէ, քանի որ «պետք է» բառը չի սահմանում ապանքի բնութագիրը և հնարավորությունները, և այդ նույն հիմնավորմամբ առաջարկելով «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը և նույն անհամապատասխանությունը ըստ Պատվիրատուի չշտկելու արդյունքում մերժելով Ընկերության հայտը՝ գործել է ոչ իրավաչափ, այն փաստի հաշվառմամբ, որ «պետք է» բառը ոչ թե սահմանում և/կամ բնութագրում է ապրանքի նկարագիրը, այլ մատնանշում է այն, թե ինչ պետք է ունենա այն ապրանքը, որը հետագայում՝ կողմերի միջև պայմանագրի կնքման արդյունքում պետք է մատակարարի Ընկերությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը կայացվել է Կարգի 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերով սահմանված պահանջների խախտումներով՝ որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից 29.11.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/98 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 15.11.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայտը մերժելու և ընթացակարգը չկայացած հայարարելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**